

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԹԵՄԻ 104-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի 104-րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովը գումարուեցաւ Մայիս 4-6 օրերուն՝ Նիւ Ճըրզիի Վուտքլիֆ Լէյք Հիլթոն պանդոկին մէջ: Իսկ Հոգեւորականաց տարեկան Ժողովը տեղի ունեցաւ Մայիս 1-4 օրերուն՝ Նիւ Ճըրզիի առանձնացման կեդրոնին մէջ:

Հիւրընկալ ծուխն էր Ֆերլոնի (Նիւ Ճըրզի) Սրբոց Ղեռնդեանց եկեղեցին:

Այս տարի Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի կարգադրութեամբ Հոգեւորականաց Համագումարին եւ Պատգամաւորական Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Մայր Աթոռի հիւր հոգեւորականներ՝ Հոգջ. Տ. Զաւէն արք. Եազըճեան եւ Արժշ. Տ. Պարոյր քինյ. Աւետիսեան:

Պատգամաւորական Ժողովը սկիզբ առաւ Հինգշաբթի Մայիս 4-ին, յետ միջօրէի ժամը 2:00-ին, թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի բացման աղօթքով եւ պատգամաւորներու մեծամասնութեան ստուգումէն ետք: Ժողովի երեք նիստերուն մասնակցեցան 191 պատգամաւորներէն 153-ը:

Պատգամաւորական Ժողովի դիւանի անդամ ընտրուեցան Տոքթ. Կարօ Կարիպեան՝ ատենապետ, Մայքըլ Եափչայեան՝ փոխատենապետ, Լիսա Մանուկեան՝ անգլերէն լեզուի ատենադպիր, Տ. Յովսէփ քինյ. Կարապետեան՝ հայերէն լեզուի ատենադպիր:

Թէ՛ Հոգեւորականաց Համագումարի եւ թէ՛ Պատգամաւորական Ժողովի ընթացքին հոգեհանգստեան պաշտօն եւ մասնաւոր աղօթք մատուցուեցաւ հայկական օդանաւային ընկերութեան արկածի զոհ գացած բոլոր ճամբորդներու հոգիներուն համար:

Պատգամաւորները յոտնկայս ունկնդրեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.-ի գնահատանքի եւ օրհնութեան գիրը, ուր ի մէջ այլոց Նորին Սրբութիւնը կ'ըսէր. «...Փառք ենք մատուցում Ամենակալ Աստծուն, որ ԱՄՆ Արեւելեան շրջաններում բնակուող հայորդեաց հոգեւոր եւ ազգային կեանքը ծաղկում է Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքոյ եւ ամերիկաբնակ Մեր զաւակունք արժանայիշատակ նոր գործերով ու ձեռքբերումներով հարստացնում են հայոց նորօրեայ պատմութիւնը: Մենք քաջատեղեակ ենք ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի կեանքին եւ Հայրապետական Մեր այցելութիւնների ընթացքում բազմիցս ականատես ենք եղել թեմական կառոյցներում ձեր փութաջան ազնիւ ծառայութեան՝ ի արդիւնաւորումն եւ ի զօրացումն ամերիկահայութեան հոգեւոր կեանքի: ...Սիրելի զաւակներ Մեր, անխախտ մնացէք ձեր հաւատքի մէջ, առ Հայրենին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ձեր սիրոյ մէջ՝ շարունակելով աղօթքն

ու գնահատելի գործը յանուն Հայրենի մեր երկրի բարգաւաճման, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեան, հայոց ազգիս բարօրութեան՝ հայրենասէր ու եկեղեցասէր ձեր ընթացքով բարի օրինակ մատուցելով ձեր զաւակներին ու յետագայ սերունդներին»:

Պատգամաւորական Ժողովի բնաբանն էր «Եկեղեցի եւ Ընտանեկան յարկ – մէկ հոգի դարձած»: Առաջնորդ Սրբազան Հայրը իր ուղերձին մէջ ծանրացաւ այս բնաբանին վրայ: Ապա ելոյթ ունեցաւ Թեմական Խորհուրդի փոխատենապետ Ասկըր Թահոսպեան, որմէ ետքը առաջնորդ Սրբազան Հայրը հինգ երիտասարդներ հրաւիրեց՝ որպէս զի անոնք արտայայտուին իրենց հաւատքին եւ ազգային ինքնութեան մասին:

Այս երիտասարդները իրենց փորձառութիւնը բաժնեցին ներկաներուն հետ: Քաջալերական եւ յուսադրիչ էր տեսնել այս երիտասարդներուն Հայ Եկեղեցոյ հանդէպ սնուցած մօտեցումն ու խանդավառութիւնը: Անոնց ելոյթները գնահատուեցան յոտնկայս ծափահարութեամբ:

Ժողովի բնաբանին շուրջ ենթախումբերու բաժնուած պատգամաւորներ, նախապատրաստուած երիտասարդներու առաջնորդութեամբ, խորհրդակցեցան իրարու հետ: Ենթախումբերու խորհրդակցութեանց արդիւնքները ներկայացուեցան յատենի ժողովոյ:

Ներկայացուեցան հետեւեալ տեղեկագիրներ.

- Թեմական Պատուիրակի Յանձնախումբ
- Արարատ Կեդրոն
- Հայ Օգնութեան Ֆոնտ
- Հայ Եկեղեցոյ Հիմնադրամ
- Սուրբ Ներսէս Ընծայարան
- Թեմական Խորհուրդ
- Երիտասարդաց Կազմակերպութեան Կեդրոնական Խորհուրդ
- Տիկնանաց Միութեան Կեդրոնական Խորհուրդ
- Դպրաց Դասերու Կեդրոնական Խորհուրդ
- Ընկերաբանական ուսումնասիրութիւն

ՊԻՏՃՃԷՐ ՎԱԻԵՐԱՅՈՒՄ

2007 թուականի տարեկան պիւտճէն ներկայացուց Թեմական Խորհուրդի գանձապահ Ճէյմս Գալուստեան: Պատգամաւորները վաւերացուցին ներկայացուած 2007 թուականի պիւտճէն:

ԱՌԱՋՆՈՐԴԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Շաբաթ, Մայիս 5, առաւօտեան նիստը բացուեցաւ եկեղեցական արարողութեամբ, որուն իրենց մասնակցութիւնը բերին Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցոյ Հայ Դպրոցի եւ Յովնանեան Վարժարանի աշակերտները՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէլիսանեանի: Աշակերտները ներդաշնակութեամբ եւ վստահութեամբ եր-

գեցին կարգ մը շարականներ, որոնք գնահատուեցան ներկայ պատգամաւորներուն կողմէ: Ապա առաջնորդ Սրբազան Հայրը ժողովասարահէն մեկնեցաւ եւ տեղի ունեցաւ առաջնորդի ընտրութեան քուէարկութիւնը:

Քուէներու հաշուարկումէն ետք ի յայտ եկաւ, որ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան մեծամասնութեան ձայնով հինգերորդ քառամեայ շրջանի համար առաջնորդ վերընտրուած էր: Այս պահուն ժողովի ատենապետը ըսաւ, որ ներկայ հոգեւորականները ժողովասարահի մուտքին դիմաւորեն վերընտրուած առաջնորդ Սրբազան Հայրը: «Ուրախ լեր» շարականի երգեցողութեամբ եկեղեցականները Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանը առաջնորդեցին ժողովասարահ, ուր ներկայ պատգամաւորները յոտնկայս եւ երկարատեւ ծափահարութիւններով ողջունեցին Սրբազան Հայրը:

Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան նախ շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորներուն՝ իրեն հանդէպ ցուցաբերած վստահութեան համար, եւ փառք տուաւ Աստուծոյ, որ իրեն առիթ ընծայած է՝ որպէս ձեռնադրուած հոգեւորական Հայ Եկեղեցոյ ծառայելու 35 տարիներ, որոնցմէ 16 տարին որպէս առաջնորդ Ամերիկայի Արեւելեան թեմին: Եւ այսօր կրկին առիթը կը տրուի իրեն շարունակելու իր հոգեւոր ծառայութիւնը թեմին մէջ: Ըսաւ, որ կեանքը շատ խաղաղ ընթացք մը չէ ունեցած, սակայն ընդհանուր առմամբ եղած է յուզիչ, գոհացուցիչ եւ արդիւնաւոր փորձառութիւն մը:

Ապա շնորհակալութիւն յայտնեց թեմի հոգեւորականներուն, Թեմական Խորհուրդին, ծովներուն եւ Առաջնորդարանի անձնակազմին:

Սրբազան Հօր խօսքէն ետք բոլոր եկեղեցականները մօտեցան առաջնորդ Սրբազան Հօր, Աջը առին եւ ողջագուրուեցան անոր հետ:

Նոյն պահուն, Թեմական Պատգամաւորական Ժողովի ատենապետին եւ ատենադպիրին անունով նամակ մը յղուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ին՝ տեղեկացնելով, որ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան առաջնորդ վերընտրուած է՝ խնդրելով Նորին Սրբութեան հաստատումը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱՇԿԵԼՈՅԹ

Շաբաթ, Մայիս 6, երեկոյեան, Թեմական Պատգամաւորական Ժողովի ասարտին, տեղի ունեցաւ ընդունելութիւն եւ ճաշկերոյթ Հիլթըն պանդոկի սրահին մէջ:

Այս առիթով մեծարուեցան, որպէս «Հայ ժողովուրդի բարեկամ», ԱՄՆ-ի ծերակուտական Սթիւ Բոթմըն, եւ որպէս «Հայ Եկեղեցոյ տարուան անդամ», յետմահու, Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցոյ երեք բարերար սիւները՝ Ճորճ Տապաղեան, Սարգիս Կապրիելեան եւ Սարգիս Մուրթանեան:

«Տերունական աղօթք»ով վերջ գտաւ ճաշկերոյթի պաշտօնական բաժինը:

ՀՄՍՍՏՆՈՒՄ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԵԱՆ

Ամենայն Հայոց Սրբազանգոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայիս 16 թուակիր նամակով, ուղղուած ժողովի ատենապետին եւ ատենադպիրին, գնահա-

տանքով եւ Հայրապետական օրհնութեամբ կը հաստատէր Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի վերընտրութիւնը:

Իսկ առաջնորդ Սրբազան Հօր ուղղած նամակին մէջ Հայոց Հայրապետը կը գրէր.

Միրելի Սրբազան,

ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի Թեմական Պատգամաւորական Ժողովի ատենապետ Կարօ Կարիպեանի եւ Ատենադպիր Լիզա Մանուկեանի՝ Մեզ ուղղուած 5 մայիս 2006 թ. թուակիր գրութիւնից գոհունակութեամբ տեղեկացանք, որ Դուք վերընտրուել էք առաջնորդի պաշտօնում՝ առաջիկայ քառամեայ շրջանի համար: Ուրախալի այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները:

Առ Աստուած աղօթքով Բարձրեալ Տիրոջ հանապազ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ նոյն նուիրումով ու եռանդով շարունակելու Ձեր աստուածահաճոյ ծառայութիւնը ի պայծառութիւն ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ